

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Ձեկույցի անվանում. Աղբահանության իրականացում

Ժամկետները՝ 01/08/2018-31/10/2018


Աղբահանության կազմակերպումը

- Ստեփանավան – կենտրոնացված աղբահանություն
- Ուրասար, Կաթնաղբյուր – շրջիկ աղբատար մեքենա


Տեխնիկական ապահովվածություն

- կողային բարձմամբ 2 աղբատար մեքենա՝1990թ. արտադրության
- առանց կողային բարձման 2 ինքնաթափ մեքենա՝ 1990թ. Արտադրության
- աղբահանություն իրականացմանը հարմարեցված կցորդով տրակտոր՝ 1982թ. Արտադրության
- «Ռենո» տիպի երկֆունկցիոնալ աղբատար 1 մեքենա 12մ³ տարողությամբ՝ 2006թ. Արտադրության
- Աղբարկղեր - 181 աղբարկղեր և աղբանոթներ, որոնցից 67-ը մետաղական են՝ 0,7 մ³ տարողությամբ և 114 պլաստմասե աղբանոթներ՝ 0,45 մ³ տարողությամբ:

Աղբահանության ծառայության որակի հետ կապված բաղադրիչների գնահատումը Ստեփանավան բնակավայրի բնակիչների կողմից:



Աղբահանության ծառայություններից բնակչության բավարարվածությունը Ստեփանավան համայնքի բնակավայրերի համար



Մոնիթորինգի արդյունքների ամփոփաթերթ Ստեփանավան համայնքի համար՝

Նորմատիվների պահանջներ	Արդյունք	Միավոր
Զի համապատասխանում-0 միավոր Մասամբ է համապատասխանում – 1 միավոր Լիովին համապատասխանում է – 2 միավոր		
Աղբի կոնտեյներներ		
Աղբամանները տեղադրված են պատվանդանի վրա (բետոնե, երկաթյա)	Ոչ	0
Աղբամանի/աղբամանների շուրջ երեք կողմից պատնեշի/ցանկապատի առկայություն	Ոչ	0
Աղբամանը տեղադրված չեն մայթի, սիզամարգերի վրա կամ փողոցի երթևեկելի հատվածում	Մասամբ	1
Պահպանված է մոտակա բնակելի տնից/շենքից աղբամանների կետի նվազագույն հեռավորությունը	Մասամբ	1
Կոնտեյներների վրա առկա էին աղբահանություն իրականացնող կազմակերպության անվանումը, հեռախոսահամարը կամ ցանկացած այլ կոնտակտային տվյալ	Մասամբ	1
Ընդհանուր առմամբ լցված էր աղբամանների 2/3-ից ոչ ավելին	Մասամբ	1
Աղբի կոնտեյներների հարակից տարածքը եղել է մաքուր	Այո	2
Աղբատար մեքենա		
Աղբի կոնտեյներների վայրին մոտենալիս կամ այդ վայրից մեկնելիս աղբատար մեքենայի թափքը եղել է փակ	-	-
Աղբատար մեքենայի թափքից առկա չէ աղբաջրերի բացթողնում	-	-
Աղբատար մեքենայի վրա առկա էր աղբահանություն իրականացնող կազմակերպության անվանումը, հեռախոսահամարը կամ այլ կոնտակտային տվյալներ:	-	-
Աղբահանություն իրականացնող աշխատակիցները կրում էին արտահագուստ և սանիտարական ձեռնոցներ	-	-
Կենտրոնացված աղբավայր		
Աղբավայրը ցանկապատված է	Ոչ	0
Ընդամենը արդյունք	6 միավոր Հնարավոր 16-ից	

Սույն տեղեկատվությունը տրամադրվել է «Մասնակցային մոնիթորինգ՝ հանուն խելացի համայնքների ստեղծման Հայաստանում» ծրագրի շրջանակներում, որի նպատակն է նպաստել Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերի 6 խոշորացված համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը:

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից:

